Համաձայնագիր 2
22.08.2019թ. կնքված N ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/29 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «24» դեկտեմբերի 2019թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի մի կողմից, և «ՇԻՆ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս Ընկերության տնօրեն՝ Դ. Պողոսյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 22.08.2019թ. կնքված N ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/29 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1. Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի ծառայության մատուցման ժամկետը (վերջնաժամկետը) երկարաձգել՝ այն սահմանելով մինչև 2020 թվականի հունվարի 24-ը:

1.2. Սույն համաձայնագրով ավելացված ժամանակահատվածի համար մատուցվելիք ծառայությունների դիմաց 2020 թ. կհատկացվեն համապատասխան ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:

1.3. Պայմանագրի 8-րդ կետում կատարել փոփոխություն «ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն «Ա. Յավրումյան» անունը փոխարինել «Դ. Պողոսյան» անունով՝ հիմք ընդունելով 22.11.2019թ. ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից քաղվածքը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«ՇԻՆ» ՍՊԸ
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7	ք. Տաշիր, Գետափնյա 45
ՀՎՀՀ 02647057	«ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900013202016, Հ/Հ 900013574018	Հ/Հ 220143330227000
Հ/Հ 900011054013	ՀՎՀՀ 06948694
ՀՀ ՖՆ աշխատակազմի	Տնօրեն
գործառնական վարչություն	
Գլխավոր քարտուղար	
Է. Գևորգյան _____	Դ. Պողոսյան _____
/ստորագրություն/ Կ.Տ./	/ստորագրություն/ Կ.Տ./